ԿԱՐԾԻՔ

Գարեգին Սահակի Թումանյանի «Կիմերները և սկյութները Հայկական լեռնաշխարհի արևելքում (ըստ հնագիտական տվյալների)» Է.00.03. - «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է հնագիտության բնագավառի կարևորագույն խնդիրներից կիմերական և սկյութական մշակույթին: Այն կազմված է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից, համառոտագրությունից և հավելվածներից (նկարներ և աղյուսակներ):

Առաջին գլխում ներկայացված են սեպագիր աղբյուրների վկայություններ, Աստվածաշնչի և պատմիչների հաղորդումներ Հայկական լեռնաշխարհում կիմերների և սկյութների գտնվելու մասին և պատմական համառոտ ակնարկ:

Երկրորդ գլխում ներկայացված է կիմերա-սկյութական մշակութային ընդհանրությունը ներկայացնող դամբարանների ընտրության սկզբունքները, ընտրված հատկանիշների համատեքստում որոշ դամբարանների մշակութային պատկանելիության նոր մեկնաբանությունը, կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության հատկանիշներով դամբարանախմբերը:

Երրորդ գլուխը ներառում է թաղման ձևի, կառույցի, ծիսակարգի, զոհաբերությունների բնորոշ տիպերը, թաղման գույքը, խեցեղենի բնորոշ տեսակները, դամբարանների բաշխվածությունն ըստ հատկանիշների քանակի:

Չորրորդ գլխում տեղ են գտել բնակավայրերում կիմերա-սկյութական մշակութային ընդհանրության հատկանիշներով համալիրների առկայության և թվագրության խնդիրները, բնակավայրերի պեղումներով հնագիտական հուշարձանների տեղազննությամբ կամ պատահաբար հայտնաբերված առարկաներ:

Հինգերորդ գլուխը ներկայացնում է լեզվաբանական և առասպելաբանական որոշ ընդհանրություններ:

Ատենախոսությունն ունի բազմաթիվ դրական կողմեր.

1. Առաջին անգամ սկյութա-կիմերական մշակույթի դրսևորումները համապարփակ քննարկման առարկա են դարձել,

2. Հետազոտությունը կատարվել է հստակ մեթոդաբանությամբ, օգտագործվել վիճակագրական մեթոդները
3. Համեմատության համար օգտագործված է սկյութա-կիմերական մշակութային տիրույթին վերաբերող ողջ նյութը
4. Ներկայացվել են բոլոր տեսակետները փաստացի հնագիտական նյութի թվագրման վերաբերյալ
5. Համադրվել են բոլոր հնագիտական տվյալները և պատմական տեղեկությունները
6. Անկասկած դրական է, որ հեղինակը օգտագործում է ոչ թե սկյութական կամ կիմերա-սկյութական հուշարձաններ, այլ կիմերա-սկյութական հատկանիշներով համալիրներ եզրույթը:
7. Աշխատանքը ներկայացված է պարզ և հասկանալի լեզվով, կարդացվում է մեծ հետաքրքրությամբ:

Ատենախոսության մեջ կան որոշակի թերություններ, որը սակայն չի ստվերել բարձր որակի աշխատության արժանիքները:

1. Ատենախոսության մեջ բացակայում է սկյութական և կիմերական մշակույթը եզրույթների հնագիտական սահմանազատումը և թվագրման հարցի լուծումը:
2. Իջեցուկ թաղումը ա. ոչ միշտ կարող է հանդիսանալ քոչվորական հատկանիշ, բ. նմանատիպ թաղումներ առկա են նաև բրոնզի և վաղ երկաթի դարերում:

Գարեգին Թումանյանի դոկտորական ատենախոսությունը կայացած հետազոտություն է՝ ունի գիտական և կիրառական նշանակություն և լիովին համապատասխանում է ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին, իսկ հեղինակը արժանի է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Հ. Գ. Ավետիսյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Գ. Ավետիսյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտքարտուղար, պրոֆ. Լ.Ս. Հովսեփյան

01.06.2021